

ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի

գիտական խորհրդի 2015թ. նոյեմբերի 18-ի նիստի

(արձանագրություն N5)

Լսելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում դասավանդման նոր մեթոդների և էլեկտրոնային հարթակի աշխատանքի մասին կրթական բարեփոխումների և որակի վարչության պետ Մկրտիչ Ավագյանի հաղորդումը՝

Գիտական խորհուրդը նշում է.

ՀՊՄՀ-ում դասավանդման նոր մեթոդների ներդրման ծրագիրը մեկնարկել է գիտական խորհրդի 27 օգոստոս 2015թվ. որոշմամբ և նպատակ է հետապնդում կրթական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ բարելավել կրթական հաղորդակցական միջավայրը, ուսումնական գործընթացը դարձնելով ինտերակտիվ: 2015/16 ուստարվա սեպտեմբեր հոկտեմբեր ամիսների աշխատանքի արդյունք է հանդիսացել Միֆայլ ծրագրային բազայի հիման վրա էլեկտրոնային առցանց ուսուցման հարթակի ստեղծումը, էլեկտրոնային մուտքագրման ենթակա 1-ին կուրսերում դասավանդվող առարկայական ուսումնամեթոդական փաթեթների ստեղծումն ու մուտքագրումը, ուսանողների և դասախոսների տեղեկատվական բազաների ստեղծումը :

Համալիր աշխատանքի հիմքում ստեղծվել է.

- Ծրագրային տեխնիկական ապահովում;
- Կազմակերպչական մեթոդական ապահովում;
- Ուսումնական հաղորդակցման առցանց հարթակի ապահովում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները: Սեպտեմբեր հոկտեմբեր ամիսներին կազմակերպվել են 3 աշխատանքային հանդիպումներ ֆակուլտետների և ամբիոնների ղեկավարների հետ: Կազմակերպվել են 32 ուսուցողական սեմինարներ ֆակուլտետների և ամբիոնների մասնագետների, առաջին կուրսերում աշխատող դասախոսների, առաջին կուրսերի ուսանողների համար: Մշակվել են և Միֆայլ էլեկտրոնային հարթակ մուտքագրվել 360 առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ: Հարթակում հաղորդակցվում են 539 դասախոսներ և 1294 ուսանողներ:

Արձանագրվել են հետևյալ բացթողումները.

- Դեռևս ուսումնասիրված և միասնականացված չեն առարկայական ուսումնամեթոդական փաթեթներին ներկայացվող ծավալային պահանջները, դրանցում ներկայացված նյութի բովանդակային համապատասխանությունը առարկայի և ՄԿԾ-ի էլքային արդյունքներին,
- Ձևավորված չէ հարթակում խորհրդատվական բնույթի հարցերի և պատասխանների, առաջադրանքներին տրվող վերջնաժամկետների, հանձնարարականների էլեկտրոնային ստացման, ստուգման և գնահատման մշակույթը,
- Դեռևս առկա է համակարգի տեխնիկական խտտանք, կապի խափանումներն ու համակարգչային թերի գրագիտության պատճառով կիրառելիության հնարավորությունների սահմանափակումները:

ՀՊՄՀ-ում դասավանդման նոր մեթոդների և էլեկտրոնային հարթակի ձևավորման աշխատանքների հետագա հստակեցման և հետագա զարգացման նպատակով գիտական խորհուրդը որոշում է՝

1. ՀՊՄՀ-ում դասավանդման նոր մեթոդների և էլեկտրոնային հարթակի ձևավորման աշխատանքների առաջին փուլը ընդհանրության մեջ գնահատել բավարար:
2. ՀՊՄՀ ամբիոններին.

- շարունակել էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթների մշակումները, դրանց հիման վրա լսարաններում իրականացվող դասավանդման մեթոդների, ուղեկցող էլեկտրոնային ցուցադրությունների, դասալսումների քննարկումները, վեր հանել և տարածել լավագույն փորձը
 - Շարունակել էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթների ստեղծման աշխատանքը երկրորդից չորրորդ կուրսերի դասընթացների համար, ապահովելով համալսարանում սահմանված ՄԿԾ-ների որակյին ներկայացվող պահանջները:
3. ՀՊՄՀ դեկաններին
 - Հետադարձ կապի միջոցով մշտապես ուսումնասիրել ուսանողության բավարարվածության աստիճանը, արձագանքել ամբիոնների և ուսանողների առաջարկներին և դիտողություններին, ֆակուլտետային խորրդի նիստերում կազմակերպել քննարկումներ, լսել առանձին ամբիոնների հաշվետվություններ:
 4. Ֆակուլտետների խորհրդներին
 - Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր տեղերի մրցույթների անցկացման ժամանակ հաշվի առնել թեկնածուի գործունեությունը դասավանդման նոր մեթոդներով ուսումնառության կազմակերպման խնդրում, դասավանդվող առարկաների շրջանակում:
 5. ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտորին
 - Համալսարանում կազմակերպվող որակավորման բարձրացման դասընթացների առարկայացանկում ներմուծել կրթական նորագույն տեխնոլոգիաների ներդրամաբ դասավանդման նոր մեթոդները լուսաբանող հատուկ դասընթաց, համակարգչային գրագիտության դարընթացի շրջանակներում առանձին անդրադառնալ էլեկտրոնային հարթակում աշխատանքի հնարավորություններին և հմտությունների զարգացմանը:
 6. ՀՊՄՀ ընդհանուր հարցերով պրոռեկտորին
 - Շարունակել համալսարանի ուսումնական տարածքները համապատասխան տեխնիկայով զինելու աշխատանքները, ինչպես նաև իրականացնել դրանց շահագործումը և տեխնիկական զննումները:
 7. ՀՊՄՀ ուսումնական գծով պրոռեկտորին
 - Դասավանդման նոր մեթոդների ներդրման ուղղությամբ իրականացնել ամբիոնների և ֆակուլտետների աշխատանքների հսկողություն:
 8. ՀՊՄՀ կրթական բարեփոխումների և որակի վարչությանը
 - Անցկացնել ուսանողական հարցումներ, մշտադիտարկումներ դասավանդման նոր մեթոդների, էլեկտրոնային հարթակում ուսանողների աշխատանքի բավարարվածության շուրջ և վերլուծության արդյունքներները ներկայացնել համալսարանի ռեկտորին:
 9. Սույն գործընթացի հսկողության իրականացումը հանձնարարել ՀՊՄՀ ուսումնամեթոդական և կրթական բարեփոխումների և որակի վարչություններին:

Ռեկտոր՝

Ռուբեն Միրզախանյան